

ՆՇԻԱՐՔ ՆԱԽՆԵԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ս. ԵՓՐԵՄԻ ԱՍՈՐԻՈՑ

ՎԵՃՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՔ ՎԱՍՆ ՆԻԿՈՍԻԴԻՈՅ ՔԱՂԱՔԻՆ

2 Եռագիր Թիւ 326ի Մատենագարանի Առաքելական Աթոռոյ Երուսաղեմի (որոյ մանրամասն նկարագրութիւնն տրուած է այլուր^{*}) բովանդակէ ի թղ. 278 ա—369 ա զչքնաղ իմն գրուած Ս. Եփրեմի (Յ 9 Յու- նիս 373), որ է՝ «Վեչաատն Ասացուած վասն Նիկիոմիդեայ խղափի»։ Սոյն այս ողբերգա- կան քերթուած գրեալ է մեծ մաքուր բո- յորգրով ձեռամբ երկուց գրչաց, Յովնան- նիսի եւ մասամբ իւրիք Վահրաւայ, ձեռնա- սուն աշակերտաց Ս. Ներսիսի Լամբրոնա- ցոյ, թուի թէ՛ ամօք ինչ յառաջ քան զվախճան սորին (Յ 14 Յուլիս 1198)։

Հայերէն թարգմանութեանս այսորիկ միւս եւս այլ ինչ օրինակ մինչեւ զարդ ան- ծանօթ է. նաև չգտանի ի միջի այլ ինչ թարգմանութիւն քերթուածոյս օտար լե- զուաւ։ Իսկ Ասորերէն բնագիրն, զոր ոմանք ի հին մատենագրաց յիշատակեն (տե՛ս առ այս «Bibliotheca Orientalis Clementino- Vaticana», ed J. S. Assemanus. Tom. I. Romae, MDCCXIX, pag. 56, 211 եւ 396, not. 2. հմտ. նաև և L. de Tillemont, Histoire des Empereurs, Tome IV. Venise, MDCCXXXII, p. 434 եւ p. 523), վաղ իսկ կորսուած անյայտ եղած է, գէթ մինչ- չեւ յայտարանգրու մնացած։ Զայս Ողբեր- գութիւն յօրինած է Ս. Եփրեմ վասն կոր- ծանման փառաւոր եւ մեծաչէն քաղաքին Նիկիոմիդեայ, զոր երկրաշարժք յամին 358 (ի 24 Օգոստոսի) եւ դարձեալ յամի 362 (ի

2 Դեկտեմբերի) հիմնայատակ քանդեցին ա- ւերեցին։

Առաջին անգամ այս տողերու գրիչն է որ ծանօթացուց հասարակաց զվերասացեալ ողբերգական քերթուած Ս. Եփրեմի ի «Յուշարձանի», սակաւ ինչ հատուածս յԱղ- բոցս ի լոյս ընծայելով^(*), հանդերձ հա- մառօտ ինչ տեղեկութեամբք, յորոց ի զէպ կը համարինք քաղելով յառաջ բերել աս- դէն զհետագայս։

«Իսկ վասն «Վեչաատն Ասացուածոց վասն Նիկիոմիդեայ խղափի», թարգմանութիւնս այս աներկրայ Ոսկեղբուր զործ է, եւ այն՝ յայտնագլխ ուղղակի եւ անմիջաբար յԱ- սորական բնագրէ յեղեալ ի հայ բան. ան- շուշտ աշխատութիւն Առաջին թարգման- շաց այն դասուն, որք առաւելագլխս պա- րագած են ի հրահանգս Ասորի լեզուի եւ զպրութեան։ Եւ միանգամայն իսկ ասաց- եալ, առանձինն հանգամանք լեզուի ե ո- ճոյ, զարձուածք բանից, եւ ընտրութիւն բառից սկներեւ ջուցանեն՝ թէ՛ սոյն ոսկե- ղինիկ թարգմանութիւն նմանագոյն է այ- լոց ծանօթ հայերէն թարգմանութեանց զը- բոց Ս. Եփրեմի»։

Բովանդակ գրուածս այս ունի ժՁ զը- լուխս, յորոց զժբախտաբար Ա. եւ Բ. զը- լուխք բոլորովին պակասին, իսկ Գ. զըլուխն ի սկզբան թերի է։

«Ասացուածք իւրաքանչիւր բաժնուած են ի տունս տունս, որք առ հասարակ զը- խագրով (ուրեք ուրեք նաև պարզ բոլոր- գրով) կը սկսին եւ վերջակտիւ եւ իբր 1-2 հրգմար. գատարկ միջոցաւ յիրերաց գատ- ուած են։ Իսկ մէն մի տուն ունի երկուս հատածս, ընդ մէջ յոցին ստորակէտ մի գրուած։ Նաև շեշտելի վանկք յաճախա-

^{*} Տե՛ս «Յայտնութեանն Յովհաննու Հին Հայ Թարգմանութիւն, զառաջինն ամ ի լոյս ըստ երկուց մեռագիր օրինակաց, համեմատութեամբ Յունական բնագրին եւ թարգմանութեան Ներսիսի Լամբրոնա- ցոյ, հանդերձ ներածութեամբ եւ ծանօթութեամբք Յրէտէրք Մուբաւ։ Եւրն յուստիոյ տախտակօր հանդերձ, յերուսաղէմ, ի Տպարանի Առաքելական Աթոռոյ Ս. Յակոբիկանց. 1905—1911.» Ներածու- թիւն, էջ 2- ժԳ։

^(*) «Յուշարձան» եւն. Վիեննա 1911, Միօթար- ան Տպարան, էջ 203—84

գոյնս շեշտիւ նշանակուած են:»—

Օրինակս այս յետոյ ի բազում տեղիս ուղղեալ է ի ձևոն Ս. Ներսիսի Լամբրոնացոյ, որպէս յայտ է յինքնագիր տեղեկութենէ նորին, որ գտանի ի ներքոյ յիշատակարանի գրչին, ի կատարածի ժ.Ձ. Ասացուածոց:

Եւ արդ ժամ է ալլիւս կատարել զոր ինչ ի մտի ունէի այն է՝ կանխել զի յոյս հանել զըտփանդակ զայս պատուական ցանկալի նշխար ի մատենագրական անմահ վատակոց մեր նախնի հոգեկից հոգեհանձար թարգմանչաց:»

Հանգամանք գրչութեան (ուղղագրութիւնն, կիտագրութիւնն եւ նշանք առուզանութեան՝ երկարն եւ շեշտն եւն.) ի հետագայ տպագրութեան ճշգիւ պահուած են համեմատ ձեւնագիր բնագրին. կը յաւելունք միայն ուրեք ուրեք զկարեւոր ծանօթութիւնս. իսկ գառուել եւս տեղեկութիւնս թողուք այլում տեղոյ (ներածութեան) եւ պատեհագոյն ժամանակի:

ԵԱՅԱ ՅՐԷՏԷՐԻՔ Յ. ՄՈՒՐԱՏ

Որպէս վերագոյնդ ասացաւ, Ա. և Բ. Ասացուած ամոլողոյին պակասեն, նոյնպէս և սկիզբն Կ. ին որ ի թղ. 278 ա սկսանի այսպէս.

..... գուռն իւր (*)
Մի՛ եկեցէ առ նա եւ հաւանեցուցէ բանալ նմա զազոտ զլուծմարանս քո: Մի՛ վաճառեր զկեանս եղբարց քոց. զի ի շտեմարանի՛ քում են կեանք նորա: Մի՛ վաճառեր վասն արծաթոյ զքաղցրութեան(*) կեանքս այրոյն: Տէ՛ս զի կեանք եղիպտացոյն ի շտեմարանս յովսեփայ կային: Բաշխեաց նոցա զկեանս իւրեանց զի մի՛ պահանջեցի զմահն նոցա: Յովսէփ երկրորդ ես զուրաշխեա աղքատաց զկեանս նոցա, զի աստ եւ անդ իրբիւ զՅովսէփ յերկոսին աշխարհս զովեցիս: Տէ՛ս զքաղաքն որ կործանեցաւ, զի տօ՛ւրք իւր եւեթ չոգան ընդ նրմա: Կորեան ի զժոխս կոածոյք նորա, պահեալ կան տուրք իւր ի բարձունս: Կորեան բազմութիւնք ստացուածոց, եւ միա-

ցի՛ն միայն առաքինութիւնք է, որոյ քակեալ է տուն յերկրի, և ունի՛ միւս եւս յերկինս: Է, որ չոգաւ մերկութեամբն, եւ ունի ի բարձունս պատմուածա՛ն փառաց: Է, որոյ թաղեալ է անդ մարմին, եւ ամենայն ստացուածք իւր ի բարձունս են: Յորժամ կարգացէ զնա ձայն յարութեանն, ընթանայ առ նմա մեծութիւն իւր: Ուրախ եղև անդ ստուգութիւն, զի չոգաւ կողմն իւր արդարացեալ: Ուրախ եղև ի նմա չընորհք (*), զի չոգա՛ն ժողովք իւր առաքինեալ: Ուրախ եղև անդ զպատմութիւն, զի մեծացան նովաւ վաճառականք իւր: Ուրախ եղև ի նմա հաւատք, զի զկեցա՛ն զնա ճշմարիտք և չոգան: Ուրախ եղև անդ կուսութիւն, զի ստացա՛ն առին զմարգարիտն: Ուրախ եղև սրբութիւն, զի պսակեցա՛ն նովաւ նահատակք: Ուրախ եղև եւ պահք, որ եղև պաշար պահողին, որ քաղցեաւ եւ ծարաւեցաւ: Ուրախ եղև աղաթք ի ստացաւդ իւր, զի պատրասեցի՛ն իւր նա ի բարձունս: Ուրախ եղև սէր յեղբարս իւր, զի եղև դարազլու՛իս սիրելեաց իւրոց: Եղև շփոթք ի բարկութեանն, սուրբք և պի՛ղծք ի միասին: Ուրախ եղև ուղղութիւն ի վանակիցս իւր, զի շփոթեալ են և զնա չէ՛ մոռացեալ: Ուրախ եղև ճշմարտութիւն, զի խառնեալ է կողմն իւր ընդ պարտաւորս եւ անպարտ է: Ուրախ եղև սրբութիւն, զի շփոթեալ ժողով իւր ընդ պիղծս եւ չէ՛ պիղծ: Ուրախ եղև յոյս, զի ի յուսահատութեան յաճախեաց յոյս կողման իւրոյ: Ի նոցա վերայ էջ սուսեր մերկացեալ, և կանգնեալ ի վերայ ժպրահացն: Փախերուք եղբարք ի բարկութենէն, եւ ապաստան լերուք յապաշխարութիւն: Մահ յափշտակիչ է, մեծատունք կրեցէք, զհամբարս ձեր յերկինս: Եղև մահ իրբիւ զզոյ, փախուցէք զզանձս ձեր ի բարձունս: Եմուտ յանկարծակի, եւ զողացա՛ւ զստացաւս եւ զստացուածս: Տունք իւրեանց եղև զերեզմանք նոցա, եւ հանդերձք իւրեանց պատանք նոցա: Էր, որ յաճախեաց պատրասեալ պատք, թաղեցաւ ի բարկութեանն հանդերձի՛ւ իւրով: Էր, որ չինեաց եւ զարդարեաց զերեզման, եւ թաղեցաւ ի շարժմանն ի տան իւրում: Էր որ կարծէր, եթէ մեծարիցի ի մահու, եւ թաղ-

(*) Առաջին տողն եւ երկրորդն ըստ մեծի մասին եղծեալ եւ անընթեանի:

(**) նոր ինչ բառ:

(*) Ի բնագրին վրիպակաւ օճոնի:

ևա՛ց զնա բարեկութիւնն ընդ շունս: Մե-
 ոսն թաղաւորք և շունք ի միասին: Հա-
 շատարեա՛ց թաղ ընդ անարգին: Մեռան
 ծառայ և տէր ի միասին, և ազատեաց ըզ-
 նոսա մահ: Զծառայն սպասեաց ի լծոյ, և
 զտէր նորա ի հոգո՛ց: Աղախին իբրև գտի-
 կի՛ն չոգաւ: Տառապելոյն իբրև զերջանի՛կն:
 Զի ալլակերպք էին ի կենդանիս, հաւա-
 ստրեա՛ց զնոսա մահ ի զժոխս: Այն ամե-

նայն ցանկութիւնք աչաց, ազատեանցաւ
 ի միում ժամու: Ստանակեցա՛ն հեղձեալք
 ընդ հեղձեալս, շփոթեցա՛ն զիսկունք ընդ
 զիսկունս: Հեղձա՛ւ մանուկ առ ձերոյ: Տե-
 սիլ որ չար է քան զամենայն, հեղձա՛ւ
 տղայ որ սկսաւ ի կեանս ընդ ձերոյ որ կա-
 տարեաց զկեանս իւր: Ստանակեցա՛ն աղճը-
 կունք ընդ պառաւունս:

ԱԶԳԻՍ ՎԵ՛. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՅԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ
 ԵՒ ԱՊԱՔԻՆՈՒՍԸ

Մինչդեռ քերս Մախուի սակ էր, Ամեն. Ս. Պատրիարք Հայր ստացաւ Ս. Էջմիածնի Գերագոյն Հո-
 գետ Խորհուրդի Օրոշոսն 10 բաւակիր Շքաբեական գրութիւնք, որով կը սեղեկացնէր թէ Ազգիս Ինքնակազմ
 վե՛ն. Հայրապետ բոխասպով սառապելէ յետոյ 20 օրեաւ սեղուրեամբ ևս բաւական լուրջ ու մասնագող համ-
 զամանով, զնորիս բնական ուսուցիչ դարձաններու և հոգաձու խնամներու. նորին Ս. Շմութիւնք
 վերասցած է իր առողջութիւնք և սկսած է աղէկ իր հայրապետական գրազուցներուն:

Այս վերջի պարագան ընդհանուր ուրախութիւն պատճառեց այսեղ ևս Ամեն. Ս. Պատրիարք Հայր հե-
 ազոզ իր եւ Միաբանութեան խնդակցութիւններ ներկայացուց Ս. Եկեղեցոյս Վե՛ն. Հայրապետին:
 ՍՄՄԻ՛նի միջոցաւ կուստմէ յիշեալ Շքաբեականի և Ս. Պատրիարք Հօր խնդակցական հեռագրին ևս
 տրուած պատասխանին պատճեններ:

Թիւ 742

24 Օգոստոս 1927 -՛, Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿ
 Տ. ԵՂԵՇԷ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆԻՆ

Սոյն օգոստոս ամսի 3-ին առաւօտեան անսպասելի կերպով Ազգիս Վե՛նԱՓԱՍ
 ՀԱՅՐԱՊԵՏ-ը տկարացաւ, որ արտայայտուեց տաքութեան բարձր աստիճանով, R-38-
 39,3: Իսկոյն և ի՞թ հրաւիրուեցին տեղական բժիշկները, որոնք մանրագնին քննու-
 թիւն կատարեցին և համապատասխան միջոցներ ձեռք առան հիւանդութեան առաջն
 անկելու համար:

Նոյն օրը (օգոստոս 3) երեկոյեան Երևանից հրաւիրուեցին հմուտ բժիշկներ՝
 Հայաստանի Կարմիր Քաշի նախագահ բժշկապետ Ապանդարատ Կամսարական և Համա-
 լսարանի պրոֆեսոր բժշկապետ Լևոն Յովհաննիսեան: Բժշկական խորհրդակցութեամբ
 որոշուեց հիւանդութիւնը՝ աջ կողմի թոքի վարի մասի բորբոքումն (Pneumonie):
 Նշանակեցին համապատասխան դեղեր, որոշեցին բժշկութեան եղանակը և յանձնա-
 րարեցին տեղական բժիշկներին ղեկավարուել ընդհանուր խորհրդակցութեամբ արձա-
 նազրուած ցուցումներով:

Հայաստանի Կարմիր Քաշի նախագահ բժշկապետի յանձնարարութեամբ Էջմի-
 աճնի Կարմիր Քաշի հիւանդանոցի աւագ բժիշկ Անանեան և նրա օգնական Բժ. Ղա-
 զարեան բուժակի նախ միասին ամենայն օր առաւօտեան, ճաշին և երեկոյեան, յա-
 ճախ գիշերները ևս, կանոնաւորութեամբ այցելում էին և ամենայն խնամք ու բժըշ-
 կական հոգացողութիւն ցոյց տալիս: Յիշեալ բժշկապետներն ևս Կարմիր Քաշի պա-
 տասխանատու քարտուղար Բժ. Վահան Ազիբէգլեանի մասնակցութեամբ, համարեա
 ամենայն օր երեկոյեան Երևանից գալիս էին Կարմիր Քաշի օթոժօրերով այցելութեան
 և վերին աստիճանի ուշադիր և խնամուտ վերաբերմունք ցոյց տալիս Վե՛նԱՓԱՍ ՀԱՅ-
 ՐԱՊԵՏ-ին շուտով բժշկելի-կազդուրելու համար:

Բնականաբար, Գերագոյն Ռօքհրդի Սրբազան անդամներն ու ամբողջ միաբա-
 նութիւնը հիւանդութեան առաջին իսկ ժամից իրենց օրդիական և բարոյական պարտք
 համարեցին ամէնօրեակ հերթակալութեամբ, գիշեր-ցերեկ Վե՛նԱՓԱՍ ՀԱՅՐԱՊԵՏ-ի մօտ
 լինել Վե՛նարանում հսկելու և ամեն խնամք ու ծառայութիւն տանելու Ծերունազարդ
 ՀԱՅՐԱՊԵՏ-ի ատողութիւնը օր առօջ վերականգնելու համար: